

## Մեկ Էջանոց տեղեկատվություն և օրակարգ

«Մեր քաղաքը դժվարությունների մեջ է, և մենք ձգտում ենք փոփոխության: Ռասայական արդարության համար մղվող ցույցերը վերջին մի քանի շաբաթների ընթացքում նորություն էին: դրանք ի ցույց դրեցին կառուցվածքային ռասիզմին վերջ դնելու հրատապ և ուշացած պահանջը»:

Քաղաքապետ Էրիկ Գարսետտի  
Գործադիր հրաման 27  
19 հունիսի, 2020 թ.

Հիմնվելով [Քաղաքապետի թիվ 27 գործադիր հրամանի](#) վրա, որը միտված է քաղաքային կառավարման գործընթացում ռասայական հավասարության հասնելու խնդրին, Քաղաքային պլանավորման հանձնաժողովը (ՔՊՀ) հատուկ հանդիպում է հրավիրում 2021 թվականի հունվարի 21-ին, առավոտյան Ժ. 9-ից մինչև կեսօրվա Ժ. 2-ը՝ լսելու Լոս Անջելեսի բնակչության տեսակետները և առաջին աղբյուրից տեղեկանալու հավասարության հարցում այն բացթողումների մասին, որոնք խաթարում են քաղաքապետարանի պլանավորման և հողօգտագործման գործընթացը: ՔՊՀ-ն հավատացած է, որ հավասարությունը ոչ միայն յուրաքանչյուրին տալիս է այն ամենը, որն անհրաժեշտ է հաջողակ լինելու համար, այլ նաև հենվում է այն համոզման վրա, որ աջակցության տարբեր չափերը պետք է պայմանավորված լինեն առավել արդարացի արդյունքներ ձեռք բերելու անհրաժեշտությամբ: Ցանկությունն է լսել քաղաքի տարբեր մասերի բնակիչների ձայնը, մասնավորապես, այն մարդկանց, որոնց ձայնը լսելի չի եղել անցյալի սահմանափակող գործելակերպերի պատճառով: Նպատակն է հայտնաբերել մարտահրավերները, ինչպես նաև հնարավորությունները, վերաձևակերպել մոտեցումը որպես որոշում կայացնող մարմին, որը նպաստում է առավել հավասար արդյունքների ձեռքբերմանը՝ հենվելով հետևյալ արժեքների վրա.

- **Համայնքի ձայնը:** Շեշտը դրվում է այն մարդկանց լսելու վրա, որոնց ձայնը ավանդաբար անտեսվել է:
- **Անցյալի մերժում:** Ձեռնարկել արմատական գործողություններ փոխելու համակարգը՝ մեր առջև դրված նպատակներին հասնելու համար:
- **Պլանավորման աշխատակազմի և քաղաքապետարանի ընտանիքի մյուս անդամների գիտելիքներ:** Մենք Պլանավորման և քաղաքապետարանի աշխատակիցներին դիտարկում ենք որպես գործընկեր այս գործընթացի ընթացքում:
- **Գործուն արդյունքներ:** Այդ գործընթացի արդյունքում մշակել Քաղաքականություն, որը հնարավոր է առաջ տանել քիչ խոչընդոտներով:
- **Ստեղծագործականություն:** Բացել մեր սրտերը և միտքը ստեղծագործականության համար, որն անհրաժեշտ է արդարության հասնելու մեր նպատակի համար:

Քաղաքային պլանավորման հանձնաժողովը նշանակալի ազդեցություն ունի, որպեսզի ձևավորված միջավայրը տարածում ունենա ամբողջ քաղաքով մեկ: Այս տեսակետից է բխում կենտրոնական հարցը և դրանից են ձևավորվում նպատակները, այն է՝ ինչպե՞ս ձեռք բերել հավասար արդյունքներ Լոս Անջելեսի բնակչության համար: Այդ օրը մենք նպատակ ունենք՝

- **Հասկանալ, թե կառուցվածքային ռասիզմը ինչպես է ներմուծվել մեր գործող քաղաքականության մեջ,**
- **Լսելի դարձնել ռասիստական քաղաքականությունից ամենաշատ տուժած մարդկանց ձայնը և,**
- **Մշակել Քաղաքային պլանավորման հանձնաժողովի՝ ռասիզմի դեմ պայքարի և հավասարության շրջանակը, որը կուղղորդի որոշումների կայացումը ծրագրերի և քաղաքականության հարցում.**

# Օրակարգ

## **Առաջին քալ. Համայնքին լսելը**

Քաղաքային պլանավորման հանձնաժողովը (ՔՊՀ) հավատացած է, որ հավասարության խթանմանն ուղղված մեր ջանքերի համար տեղեկատվության և ուղղորդման հիմնական աղբյուրը այն մարդիկ են, որոնց վրա խտրական քաղաքականությունները ամենաշատն են ազդել: Նրանց կյանքից և համայնքից վերցված օրինակները մեր համակարգի ձախողումների ամենահիմարար ապացույցներն են: Բացի դա, անմիջապես շահառուներից ստանալով տեղեկատվություն այն մասին, թե ինչը չի աշխատում, կարող են բացահայտվել կարևոր տեսակետներ հնարավոր լուծումների մասին: ՔՊՀ-ն ձգտում է այս գործընթացում համատեղել էպիգոդային տեղեկությունները խորաթափանց տվյալների աղբյուրների հետ՝ լիովին արտացոլելու անհավասարության սկզբնաղբյուրները, արդյունքները և հնարավոր լուծումները:

## **Ներածություն (9:00 - 9:15)**

### **Ինչպես է կառուցվածքային ռասիզմը ազդում հողօգտագործման և պլանավորման գործընթացի վրա (9:15 - 10:00)**

Մեծ տարաբաժանում. Լոս Անջելեսի հավասարության ինդեքս Ռոն Գալպերին, Լոս Անջելեսի քաղաքապետարանի վերահսկիչ

Անհավասարության խթանիչ ուժերը

Լաուրա Մուրայդա, SCOPE/Հարավային Լոս Անջելեսում առողջ համայնքների կառուցում

Անհավասար պլանավորման և հողօգտագործման արդյունքները

Ֆայսալ Ռոբլ, Լոս Անջելեսի քաղաքապետարանի պլանավորման բաժին

## **Հանրային մեկնաբանություն (10:00 - 11:00)**

Հանրության անդամները 1 րոպե կունենան խոսելու համար՝ ավելի շատ մեկնաբանություններ լսելու համար: Համայնքի անդամները կարող են նաև մեկնաբանություններ տրամադրել հարցման միջոցով՝ անզլերեն, իսպաներեն, տազալերեն, կորեերեն, չինարեն և հայերեն լեզուներով:

## **Քաղաքային պլանավորման հանձնաժողովի՝ ռասիզմի դեմ պայքարի և հավասարության շրջանակի տեղեկատվություն (11:00 - 12:00)**

Համայնքի պլանավորում կարևորելով հավասարությունը. Մարդկանց պլան - UNIDAD դաշինք

Հողօգտագործում, որն աջակցում է աշխատող չքավորներին - UNITE HERE

Հավասարության քարոզչություն զարգացման գործընթացի միջոցով - Փոքր Տոկյոյի համայնքի խորհուրդ (Little Tokyo Community Council)

Համայնքային սեփականության ռազմավարություններ - Լոս Անջելեսի վարձակալների միություն (LA Tenants Union)

## **Հանրային մեկնաբանություն (12:00 - 13:30)**

## **Ամփոփում + հետադարձ կապ (13:30 - 14:00)**

Միջոցառման ժամանակ թարգմանություն կապահովվի հետևյալ լեզուներով՝ իսպաներեն, թազալերեն, կորեերեն, հայերեն և չինարեն: Պահանջի դեպքում ՔՊՀ-ն կարող է մասնակիցների համար ապահովել ժեստերի լեզվի թարգմանիչներ և անզլերենի ու այլ լեզուների միջև թարգմանություն, որոնք նշված չեն: Բոլոր խնդրանքները պետք է կատարվեն միջոցառումից կամ հանդիպման ամսաթվից առնվազն երեք աշխատանքային օր կամ 72 ժամ առաջ: Կացություն կամ թարգմանչական ծառայություններ խնդրելու կամ այլ հարցերով դիմելու համար, խնդրում ենք կապ հաստատել՝ [cpc@lacity.org](mailto:cpc@lacity.org): Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս ժամանակացույցը կարող է փոխվել: